

ԲԱՅՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "
ԿԱՆԽԻԿ



ՊԵՏԱՆԻԿ

Գրութիւնք եւ
շին տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ԶԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 15 ՇԱՐՈՒԹ 1900

ԹԻԻ 170

ԶՈՒԼԱՐԱՆ

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՒ

ՅԱԿՈԲ ԾԵՐՈՒՆԵԱՆԻ

Կը ձուլէ ամեն լեզուէ տպագրական տասեր,
մասնաւորաբար Հայերէն եւ Թուրքերէն, Էսպան,
Քատալոն, Ինթերլիններ, Գիծ եւ Կարնիւթիւր:

Գիները յոյժ գիւրամատչելի: Հասցէ

AGOP DZĖROUNIAN SOPHIA (BULGARIE)

ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ

Գ.

Հոգաբարձութիւնը, այս հոգ բարձու իսկապէս
հոգատու պաշտօնէութիւնը Պուլկարիայից մէջ եւ
ղեր է տեսակ մը միջնաշնորհը անանկ մարդիկնե-
րու, որոնք կոչուած ըլլալով հանգերձ կատարե-
լու բարոյական ու նիւթական ամենէն կարեւոր
գերը, չը գիտեն մինչեւ իսկ սահմանը տալ, գոնէ
սահմանը տալ իրենց յանձնուած պաշտօնին ու
պարտականութեանցը:

Ատոնք՝ աւանդօրէն վարժապետին ձօնուած
«Այս շարժում. դրամ՝ չը կայ, գալ շարժում Աստ-
ուած ողորմած է» յաւիտենական ու հին յանկեր-
գի մը հաւատարիմ արձագանքները, իրենց հայ-
րերէն ու պապերէն ժառանգած շուկայամիտ
հաշիւներով գիտցած են միայն աժանը գտնելու
հետապնդիլ եւ միեւնոյն ատեն այդ աժանն ալ չա-
փազանց սուղ ընել, քանի որ իրենք ալ իրենց
կարգին ութիւններու հիւանդութենէն բռնուած,
ասկէ անկէ օրինակուած բազմակողմանի ծրագրի
մը շուրջը կը գառնան միշտ, նման այն թիթեռ-
նիկին, որ լուսաւոր կանգնելի մը շուրջը կը դառ-
նայ անդ իտակցօրէն ու կ'այլի վերջապէս:

Ճորձ Ժրագիր մը ունենալ եւ սակայն աժան
վարժապետներով դահացներ սյդ ծրագիրը, ահա
միակ հոգը, զոր կը բառնան հոգաբարձուները,
կամ իրենք ստեղծելով եւ կամ իրենց նախորդ-
ներէն ժառանգելով այդ անել վեճակը: Մէկ խօս-
քով ութիւնները չը ծայրատելու մարմաջը որ ի-
րենց փառասիրութեան է՝ն տկար կողմն է, հար-
կադրած է զիրենք պահելու ապիրատներու բա-
նակ մը, որին աղբիւնքը մէջ տեղն է այնքան
խոշոր, որքան հլւլէն տիեզերական շարժումին
մէջ:

Արգաւանդ հոգի մը վրայ, որպիսի է հայ սը-
րամիտ մանկութիւնը, բարոյական վերին հսկո-
ղութեան չգոյութիւնը սրտի մորմոքով դիտած
ատեննիս, շատ տարօրինակ է տեսնել, որ այդ
հոգաբարձուական մարմիններ — ամենքն ալ գը-
րեթէ աննշան բացառութեամբ վկայեալ շուկա-
ցիներ — մինչեւ հ.մա իրենց ելմտագիտութեանը
վրայ ալ լաւ գաղափար մը չեն տուած եւ ընդհա-
կառակը իրենց անձնական գործերու մէջ վայե-
լած համբաւը տարած ու թաղած են վարժարա-
նական գործերու մէջ անփութօրէն: Շատ մը տե-
ղէ պիտոճէի բացի քրթմնջիւններ, տեղէ մը ա-
մընթացի կիսուն մէջ ամսականներու զեղջի ար-
ձագանքներ, իսկ ամեն տեղէ գրեթէ անվճար
ամսականներու համար վարժապետական տրտունջ-
ներ կը խլացնեն մեր ականջները ամեն օր ու
ցոյց կուտան աստիճանը բարեացակամութեան,
որով կը վերաբերին հոգաբարձուները դէպի մեր
դպրոցական գործերը նոյն իսկ իրենց հասկցած
ու ճանչցած ելմտական խնդիրներու մէջ անգամ:

Եւ դուք՝ ընթերցող, կարող էք ալ մտածել
թէ հոգաբարձուներու այս ընթացքը որչափ հը-
րապտորիչ կընծայէ ստուցչական ոտպարէզը՝ ուր-
կէ բնականաբար պիտի մեկուսանան հեազհետէ
պարկեշտ ու կարող ուսուցիչները, տեղ տալով

խել մը թաքսաններու, որոց միակ մտածումն է մէկ կողմէն կաշինին քաշքշել ու միւս կողմէն ալ հոգաբարձուական ու վարժապետական ներդաշնակութեան մէջ քով քովի համանման պատկերներ ստեղծելով դառնապէս լացնել լալ սիրող այս լալկան ժողովուրդը:

Վերջապէս քանի բարձրանաս մեր կրթական պաշտօնէութեան դասակարգային աստիճանները, այնքան ալ մեծ ու անսրբագրելի պիտի դառնան մեղքը, որոնցմով չազախուած են անոնք վարժապետէն տնօրէնը, տնօրէնէն հոգաբարձուն, հոգաբարձուն թաղականը և վերջապէս թաղականէն ժողովուրդը, ամեն այս պաշտօնական կամ անպաշտօն վերելք կը ծառայէ գտնելու maximumը այն պատասխանատուութեան, որոնցմով կը ստեղծեն մեր շուրջը կրթական վիթխարի պարապը և հայրը կը դառնան այս մեծ ամուլութեան:

Անոնց մէջ չը կայ գրեթէ տարր մը, որ լիովին ըմբռնէ իր վրայ ծանրացող պարտականութեանց մեծութիւնը և ըստ այնմ հոգի դնէ իր աշխատութեանը մէջ ամենքն ալ կարծես իրարու հետ դաշնակցած են հէ՛գ մանկութեան թեւէն բռնած խել մը կրթական ծիծաղելի շրջաններ բոլորել տալէ վերջ, յանձնելու զանի կենաց պայքարին, բացարձակապէս զուրկ ամեն հարկաւոր եղած բարոյական ղէնքէ և մտաւոր պաշարներէ:

Ու յետոյ.

Յետոյ Աստուած թող պաշտպանէ պատերազմին այդ անղէն ղինւորը . . . :

ԾԱՆՕԹ

ԾԻԾԱՂԵԼԻ ԴԻՄՈՒՄՆԵՐ

Ճշմարտապէս քննադատելի կողմեր ունեցող մէկ քանի գաճաճներ վախճալով իրենց թերութիւններու հրապարակային մերկացումէն, ժամանակէ մը ի վեր բան գործ ըրած են Պուլկա-կարահայ մամուլին պատասխանատուներուն ոտքերը իյնալ և թախանձել, որ կամ հրաժարին և կամ ազգարարն խմբագիրներուն, որ խնայեն իրենց, չը նայելով որ անոնք — թերթերը — այդ կերպով ճշմարտութիւնը սքօղած եւ հետեւաբար ամենաստոր դեր մը կատարած կըլլան իրենց պարտականութեան կիրառման մէջ:

Բարեբաղդաբար մեր պատասխանատուները այնքան ազատամիտ ու օրէնսգէտ են, որ ատանի

պառաւական խօսքերու եւ ոչ մէկ չափով կարեւորութիւն կ'ընծային, ուստի ատոնց բոլոր գոռոգումը կստանայ անապատին մէջ կազկանձող աղաղակի մը հանդամանքը, բոլորովին անարձագանք մնալու դատապարտուած:

Եւ որպէս զի աւելի շեշտակի չ'ենթարկուին մեր խարաղանին, կը յանձնարարենք հրապարակաւ այդ գաճաճներուն հրաժարիլ քսութեան և չարախօսութեան ամենաստոր դերէն և ջանան շտկուիլ, վստահ ըլլալով թէ մենք առանց պատասխանատուի չ'ենք մնար և գիտենք հարուածել ապականած բարքերը օրինաց ու հանրային բարոյականին պահանջած սահմաններուն մէջ:

Խօսք հասկցողին շատ բարեւ:

ԱՉԳԱՅԻՔ

Պէրպէրեան Էմարեհամբաւ գիշերօթիկ վարժարանը այս տարի 9 շրջանաւարտ տուած է ազգին, որով մինչև հիմա ընծայած շրջանաւարտներուն թիւը կը հասնի 135ի: Նոյն վարժարանը վերջացող տարւոյն մէջ ունեցեր է 64 գիշերօթիկ (մեծ մասամբ գաւառացի և հեռաւոր վայրերէ) եւ 185 ցորեկեայ ուսանող. Գիշերօթիկներու մէջ են 7 որբեր, որոնց 4ը պաշտպանեալ:

Այս տոկերը՝ զաւկներնուն խնամեալ կրթութիւնը: մը տալ ուղող Պուլկարահայ կարող ազգայնաց ուշադրութեանը կը յանձնենք:

Նպաստից Յանձնաժողովը նկատելով որ գիւղական որբանոցներու մէջ ազգ. նախակրթարանաց համար սահմանեալ ծրագիրը նոյնութեամբ գործադրել կարելի չէ, մանաւանդ նիւթական անձկութեանց պատճառաւ, որոշեց որ գիւղական նպաստընկալ ամբողջ որբանոցներու մէջ միայն հայերէն լեզուն, կրօնքը, պատմութիւնը և թրւաբանական դործողութիւնները աւանդուին տըղոց. իսկ միւս կողմէ որոշեց նաեւ դաւառացի խումբ մը ուշիմ տղաքներ ընտրելով անոնց խնամեալ կրթութիւն մը տալ յառաջիկային Դըպրեվանուց մէջ, այժմէն ալ անոնցմէ մաս մը զետեղելով Պէրութի բժշկական վարժարանը, բժշկութիւն սորվելով իրենց տեղերը դառնալու համար:

—Պոլսոյ Գարակէօմրիւկ թաղի հրկիզեալ Ս. Յովհանն Ոսկերեւրան եկեղեցին 600 ոսկիի ապահովագրութեամբ ըլլալով, հրդեհին յաջորդ օրը Ռոսիա ապահովագրական ընկերութեան Պոլսոյ մասնաճիւղին տնօրէնը՝ յիշեալ գումարը յանձնելու նոյն եկեղեցւոյ խնամակալութեան ատենապետ Վսեմ. Աբիկ էֆ. Ունճեանի:

Հրկիզեալ եկեղեցիին բոլոր գոյքերը ազատուած են, բացի մեծ ջահէ մը զոր չեն կրցեր ժամանակին իջեցնել առաստաղէն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԴ

Հոգաբարձութիւնս հարկ կը համարի ծանուցանել թէ ի նպատակ քաղաքիս Ազդ. երկսեռ վարժարանաց 120 կտոր խնամով և նուրբ ճաշակաւ պատրաստուած ձեռագործներ վիճակահանութեան դրած է, մէն մի տոմսի գին 1 ֆր. արժողութեամբ:

Լիայոյս եմք որ արգոյ հայ հասարակութիւնը բազմաթիւ աղբատ և որք մանուկներու կրթութեան գործը ապահովելու մեր այս ձեռնարկը պիտի հաճի քաջալերել, փութալով գնել վիճակահանութեան այդ տոմսերէն:

Ի դիմաց Հոգաբարձութեան
Ազդ. երկսեռ վարժարանաց

ԿՆԻՔ

Վառնայի Որբախնամը

Վառնայի երկսեռ Որբախնամի Ա. եռամսեայ հաշուեկշիռէն կը տեղեկանանք թէ, նոյն ժամանակամիջոցին ընկերութիւնը թէ՛ բաժնեկիներէ և թէ՛ նուէրներէ գանձած է 536 ֆրանք, ուրկէ 47 ֆր. 90 սանդ. ծախքը հանելով կը մնայ 485 ֆր. 20 սանդիմ:

Գործ. Ժողովը կը յայտարարէ թէ Վարազայ վանքի որբանոցին մէջ խնամուելիք մէկ որբի տարեկան ծախքը քիչ օրէն պիտի զրկուի ի Պատրիարքարան:

Որբախնամի այս յաջողութիւնը շնորհաւորելի կը գտնենք ըստ ամենայնի, որ գործնական ապացոյցը կը համարուի Ժողովրդեան համակրանքին ու վստահութեան, սւ նորէն կը հրաւիրենք ժողովուրդը որ անխտիր մասնակցի այս գերազանցապէս բարեգործական պարտականութեան:

—Վաղը, տեղւոյս Ս. եկեղեցիին Ղալբայի դասուն հաստատման Ա. տարեդարձը ըլլալով, Պատարագի արարողութիւնը եռաձայն պիտի կատարուի, առաջնորդութեամբ ծանօթ Դպրապետ Ս. Միհրան ձէրահեանի: Պատարագէն ետքն ալ հոգեհանդստեան պաշտօն պիտի կատարուի Ղալբայի դասուն անդամաց ննջեցելոց հոգւոյն համար:

Կ Ս Մ Ի Թ

ԱՄՕԹ է...

Զունեցածը ունիմ ըսելով անոր ասոր պարծենալը՝ ամօթ է:

Դատարանի կողմէ տրուած մէկ վճիռը՝ կուսակցական ամենաստոր հաշիւներով թաղականութեան պաշտօնական կնքովը ելլել ուրանալը՝ ամօթ է:

Պողաղ թօգլուղունա բռնուած երկու ուսուցիչներով 12 տեսակ այլադան գիտութիւններ կրնամ աւանդել տալ ըսելը՝ ամօթ է:

Քաղքէ քաղք ու դուռնէ դուռ պտըտելով թրախօմայով առած կնկանը բտրայովը ֆառթ ֆուռթ ընելը՝ ամօթ է:

Հանդերձավաճառ, կօշկակար, բէրուքէր ու գլխարկավաճառը տօղապը դնելով կըկռիկօ հագուած ոգուած հրապարակին մէջ պտըտիլը ամօթ է:

Սրբավայրի մը մէջ անպատկառ դիրքով կենալը և զօղոտ տեսակէն չախի մը արժանանալը ամօթ է:

Անոր ասոր եարամիչ ըլլամ ըսելով՝ սրճարանները ու գինետոնները լրտեսի պէս սլքտըկալով ան աս իրար ձգելու համար բանսարկութիւններ ընելը՝ ամօթ է:

Զեռք բերածը ուրին ջուրին խարճելէ ետքը՝ պախալին խասապին կռնակը շոյելով անոնցմէ սուսիկ բուսիկ առածը տալով թռանքէթայով վճարել պարտաւորուիլը՝ պիւսպիւթիւն ԱՄՕԹ է:

ԲՈԺՈԺԻԿ

Ա.Զ.Գ.

Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ հասարակութեան թէ յանձնակատարի կանոնաւոր երթևեկ մը հաստատած ենք ընդ մէջ Վառնա, Հուժա, Բլէշեա, Սօֆիա և Ռուս-ճուրի ու պիտի գոհացնենք մեր Պատ. յաճախորդները ամեն կերպով: Կեդրոնատեղին է Տ. Ա. Զարպահանէլեան գրաստունը Վարնա.

ՆՀԱՆ ՍԱՐԱՔԵԱՆ

Պ Տ Ո Յ Տ

ԲԱՐԻՉԻ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԵՍԻՆ ՄԷՉ

8

Հունգարական տաղաւար. — Բովանդակ Հունգարիա աղգային անձնասիրութենէ մը թերադրուած ջանք չէ խնայած արժանաւոր կերպով ներկայացնելու իր ցուցահանգէսն օտար տէրութիւններու շարքին մէջ:

Շէնքլին ճակատներն օրինակուած են Հունգարական ընտրելագոյն յիշատակարաններէ: Ելլաւոր դուռը ժաքի արքայարանին մեծ դուռնէ աշտարակը, որ 40 մէքր բարձրութիւն ունի, դղեակի մը եկեղեցւոյն աշտարակին յարեմանէ: Կամարները Լէօքցի քաղաքապետարանին, ժանեակները Բէշգայի օրթոտոքս եկեղեցւոյն ե պատուհաններն ուրիշի մը ընդօրինակութիւններն են: Վերջապէս Ռոմանեան, Գոթական, վերածնական և բուն հունգարական ոճերու անհիթթ խառնուրդ մը որ մարդուն վրայ տարօրինակ տպաւորութիւն մը կը գործէ: Նախասրահը, Ռոմանեան սրահ մը զարգարուած է որմանկարներով որք ժԴ. դարու յիշատակարաններէ ընդօրինակուած են, կը պարունակէ բազմթիւ կողապարուններ ասպետական դամբարաններու: Գետնայարկի աջակողմեան առաջին սրահին մէջ կը տեսնուի գերեզման մը, Թ. դարու հեթանոս հունգարացի ասպետի մը պատկանող, որուն մարմնոյն շուրջը խառն ի խառն իրարու քով դիպուած են գրամներ, սուրի կտորտուքներ և ձիւ մը ծնօտ, որ ասպետին ձիւնն է. որուն գլուխը կտրելով, ըստ տեղական սովորութեան, իր տիրոջ հետ թաղած են: Հոն կը տեսնուին նաև շատ մը հին զէնքեր, աղեղներ, նետեր, վահաններ զանազան ձևերով, զորո հին Մաճառք կեդր. Ասիայէն բերած են իրենց արշաւանքներէն գառնալու ատեն: Մասնաւոր խորշերու մէջ զետեղուած են Հունգարիոյ պաշտպանին Ս. Մտեփաննոս թագաւորին և իր յաջորդներուն օրով եղած դրամները: Յաջորդ սրահին մէջ կը գտնուի Ս. Սիմէոնի դամբարանին արտաբերութիւնը (520 տարուան հնութիւն), յիշատակարան մը Ուշագրութեան արժանի է բնական գանգական հոյակապ ոճով կիտուած անկար մասնատուի մը, տասնևմէկերորդ դարու գործ, ինչպէս նաև Փրանսուա Ա. ի և Լուի ԺԴ. ի կողմէ ստորագրուած ոսկեղօծ հրովարտական հսկայ կընդրներով և ազնուականութեան վկայագրեր՝ նկարուն զինանշաններով: Երբորդ սրահը Զինուցարանն է, ուր ԺԵ. դարու ասպետական զէնքեր ի սոյց դրուած են ապակեգարաններու մէջ: Յա-

կինթներով զարգարուած դրահներ, տաղաւարտներ, թագեր, շեղփեր, կացիններ, դեղարգներ, ոսկի երախակալով և Կարէն պատեաններով դահարապարդ սուրի շքնաղ հաւաքածոյ մը կը կազմեն: Ասոնց մէջ են Մադիա Քէրօլէնի և Քոլումանի նշանաւոր սուրբը, ուոյ վրայ փորագրուած են Հունգարիոյ այդ երկու նշանաւոր թագաւորներուն անուաները փառաւոր դրուանգներով: Ուշագրութեան արժանի են նաև ձիերու ամբողջ կազմածներ, համակ ոսկիով և արծաթով բանուած, ասպանդակներն զուտ արծաթ են, կարծիր յակինթներով զարգարուած: Ասոնք ամենը պատմական, հնագիտական և արժէքի տեսակետով մէկ մէկ հրաշակերտներ են: Յաջորդ սրահը բուն հունգարական ճաշակ մը կ'արտաբայէ և զերծ է իտալական ազդեցութենէ որ Մադիաի օրով առաւելակշիռ էր: Հոն ի սոյց դրուած են գիւղական կեանքի և ձկնորսութեան յատուկ առարկաներ. հուսա մեծ լաստ մը կայ, շինուած երկու ծառի կոճղերէ որք կրակով փորուած են, հունա եղջերափողեր՝ որք դանակի ծայրով փորուած են: Գետնայարկն այս չափ. հիմա ելնենք առաջին յարկը, ուր մեծաւ մասամբ վերածնութեան ոճն է որ ի հանդէս կուգայ: Առաջին երեք սրահներն՝ սրոյցմէ պիտի անցնինք, Հապսպուրկեան հարստութեան յիշատակարաններով լեցուն են:

Փրանց Սօլէֆ կայսր, միւսէոններն և եկեղեցական գանձարանք իրարու հետ միացած են հոս հրաշալեաց ցուցահանգէս մը պարզելու, ոսկեհուռ շուրջառներ, թանկագին դորդեր, յակինթներով զարգարուած ոսկի սկիհներ, մասնատուփեր, ազամանդակուռ եպիսկոպոսական թագեր ևն՝ այցելուներուն աչքերը կը խառնեն:

Ասոնցմէ մեծ մասը Ագոսի վանքերէն եկած են Հունգարիա ժԷ. դարուն վերջերը: Յաջորդ սրահի մը մէջ ի սոյց դրուած են պալատական շողշուղուն համազգեստներ կապշտ մետաքսէ և ոսկեթել մարդարիտներով բանուած՝ այսպէս նաև եպիսկոպոսական գուռազաններ, սրբատուփեր, սկիհներ, ոսկի մասնատուփեր, կամարներ, ճարմանդներ, ազամանդէ մանեակներ, եւ արծաթէ անօթներ:

Զէնքերու մէջ նշանակութեան արժանի է զրահը Թրանսիլվանիոյ Պաթորի իշխանին, որ յետոյ Բուրնիոյ թագաւոր եղաւ, Հիւսարներու սրահին մէջ սիւնակի մը վրայ դրուած է Փրանց Սօլէֆ Կայսեր կիտանգրին: Այս եւ ուրիշ մէկ քանի սրահներու մէջ կախուած են հունգարական հին դըրօշներ, որոնք ցուցահանգէսին հիանալի ամբողջութեան վրայ հնադիտական զարդ մընալ կաւելցնեն:

(Շար.)

8.

ՍԻՐԱՅԻՆ ԿԱՅԾԵՐ

ԵՐԿՆԱՀԱՅԵԱՅ ՊԵՒԵՐԸ

Հա՛, հա՛, ինձն եր, կայծ ու կայծակ երգյունիսն,
Որին ի սեւ ցաւերս ամեն ցնդեիսն:

ՄԱՐԴ ԱՆ է որ յուզում է մերք անգորով
երգյունոյ մը սարսափեցիկ արհիւ քով:

Աստղեր յուսին փախ կուսային արսալած,

Երբ ի սեւ զար ինձ աչք արեւ վեհապանծ:

Ինձն եր ինձր, երգյունիսն եր, որ իր ձիգ
նայումսներով յոյս կուսար ինձ փաղանցիկ:

Բեւեռն փայլ կործիր ցցած երկրորեակ

Հրցաններով՝ ուրիշ ցայտեր բոց կրակ:

Կուգար մեկեղ հե՛զ պասանոյս նախընծայ

Սերն ու սիրքս անհասն փոխել անխնայ:

Ինձր արեւս, ինձն իսեպս, իմ երազ

Իսկ ես խեղճով մոլորակը, ես նոխազ՝

Այլին առջեւ, ոսկին ներքեւ յարածաւ:

Այի արցունք ցանցներով գայի ման:

Սիրսս աներակ, փարփանք եղած ման ի ման

Ձուր օրերս կանցունեի անկումսն:

Հոգիս եր բաց, փակքս բաց, սիրքս բաց

Իրեն՝ առաջ, բաղդն էի ես, բաղդն ու հաց:

Բայց ճիւղի մէջ գուսանուիս արսառոց:

Ի՞նչ փոյթ իրեն պասանելիս բաց ու կոծ:

Իր փայլիկն կը ձօնէի ես քիւր ահ,

Ձոր ինձ ծաղրէր անգործէն փահ, փահ, փահ:

Անցան օրեր եւ սասաններ իր հոգին

Փառք Աստուծոյ, արանդեցին դժոյղին:

Եւ սարիի շարփի մը մէջ իմ պեխեր

Բուսան, բերին ինձ փորձ կեանքի խրատներ:

Այդ պատճառաւ ահա պեխերս ոյրումն

Միշտ վեր երկինքն անային անքեմ ու կանգուն:

Աստուծոյ մը փորձ սարիի յայտարար

Հպարտ ու գոհ վեր կը նային անդադար:

ԱՊՈՒ—ՆԱՏԱՐԱ

* *

Աճեմին խէյֆէն դու խեղքս առիր,

Ձիս Մեծնուն՝ բեզ ալ Լէյլա մի արիր:

Տափուտի ձայնով, չամիչ աչքերովդ

Ղարիպիս ազան բիւլահն երեցիր:

Բուրլանթի մային մատիւ կու վայրէր,

Եանուխ կանչէիր Գօշմա, Մանիններ:

Հէլէ Մէտինէ խուրմասի բինթըդ՝

Սրտիս տեղէն տեղիկիւն կ'անէր:

Բագիպս էր սիրելիւ, զիւպպէ հէրիֆ մի,

Բամանքդ ալ ուստա ֆունտուս սթուռ:

Սոթի կարի պէս զիս սոյմիշ արիր,

Փախաթ չի վայելած՝ թախլան նետեցիր:

ԱՍԽԱՐ ՏԻՄԻԿԵՆԵ

ԽՍԵԼՈՒ ՊԱՏՐՈՒԱԿՆԵՐ

Անցեալ չորեքշաբթի իրիկուան ժամը Գին ատեն
ներք գինետան մը առջևէն կանցնէի, հոն տեսայ մէկը
որ անկիւն մը նստած՝ խմելու կը պատրաստուէր, և ու-
րուն հետ տեսակցելու անհրաժեշտ պէտքն ունէի: Ներս
մտայ ու նոյն անձին հետ խօսակցելէ վերջը սուրճ մը
ապսպրեցի և ամբողջ մը առած առանձինն նստայ:

Մտառաւոր՝ որուն Միջո կամ Մոնյէ անուն
նը կուտային, սեղանին առջև կեցած՝ օղիին գաւաթնե-
րը կը լուար, որոնք չը գիտեմ ի՞նչ արուեստով մատ-
ուակին մատներուն տակ իրարու զարնուելով սոխակի
պէս կերպէին:

Սեղանները գրեթէ պաշարուած էին մեծ մասամբ հա-
նաճ դասակարգէ:

—Պարոն Սամիկ, իմ օղիս զրկէ:

—Պէնիմ շիշէի տէ վէր:

—Իմինս ալ զրկէ:

—Առաջ մեր գործը լմնցուր:

Միջոն կայծակի արագութեամբ կը կատարէր այս
մէն հրամանները:

Կարգապահութիւնը կատարել էր. սէր և բարե-
կամութիւն կը վազէր... շիշերու բերաններէն:

Անկարելի ըլլալով բոլորին խօսակցութիւնը հոս ար-
ձանագրել, մօտս եղող երկու ընկերներունը գրելով պի-
տի բաւականանամ:

—Տիրատուր աղա, աս իրիկուն շատ չխմենք:

—Հոգիդ սիրես, նորէն մի սկսիր: Աս մէրէթը
կը խմենք կը նէ ուղեւորս չէ ես: Մոմչէ՛, պիւր շիշէ
ճիւղէ:

—Մէյ մըն ալ տոբթորներուն հարցուր: Մէրէլէ-
րէ պիրաղ էօղէն:

—Աստուածդ սիրես, ձգէ՛ սա տոբթորները: Քար-
թոֆ սալաթաւ տա կէթիւր:

—Ինչ կուզես ըսէ. մարդիկը իրաւունք ունին,
մարմինիս կը կործանենք կոր: Պարոն Սրապ, խընար
թուրչուսունտան տա պիրաղ կէօնտէր:

—Պարապ խօսք. խմելիքէն աւելի՝ մտմտութն է մեզ
կործանողը: Կենացդ:

—Անուշ ըլլայ:

—Գինարիտս աղան ալ երկաթի պէս մարդ էր շա-
մա՝ մտմտութն գլուխը չազատեց, մեռաւ:

—Ձեմ ըսեր որ իրաւունք չունիս. Կենացդ:

—Անուշ:

—Կուռնիկ աղան ալ ուրախ զուարթ մարդ էր.
Փախաթ կնիւնը սիւսին տիւղէնին չգիմացաւ, էնմէյէն
մեռաւ. Ա՛յն... եկո հետդ թոքա մը ընենք:

—Մոմչէ՛, շիշէի տոլտո՛ւր. իրաւունք ունիս:

—Օր մը չէ նէ օր մը պիտի մեռնինք, կ'օգտէ որ
մարդս առանց մտմտութիւն անցունէ ատենը: Ձեր կենացը:

—Անուշ. Հակառակը չեմ պնդեր. Կուռնիկիս
աղան տիւր տիրի մարդ էր, մտմտութն նետեց թախլան:

—Մարգար աղային երեքը շնայի՞ն անգամ մը, բէնկ չէ մնացեր, տասնէկ երթայ նէ՛ քանի մը ամիսէն ան ալ կը մեռնի. օ՛ֆ, օ՛ֆ, կենացդ:

—Անուշ: Մինաս աղան ի՞նչ է որ. մտմտութեն սէր-սէսցեր է: Չեր կենդանութեանը:

—Անուշ: Ա՛խ, սիրտս չդիմանար ասանկ բաներու. շուշիէի տօլտօլը ծօ՛:

—Ես բոլի սիրտ եմ, չեմ կրնար դիմանալ: Մոմէ, իբի շիշէի պիտէն կէթիւր քի մէքիկ կիպի կիտիպ կէլ-մէյէսին: Մտմտութե ունեցողներն ալ աղէկ մարդիկ կըլ-լան կոր, վէսէլամ: Կենացդ:

—Անուշ շէքէր ըլլայ: Հապա խաչի՞կը, երկու տարի պօշ պտտեցաւ, սիրտը դրաւ, երկու ամիս հիւանդ պառ-կեցին ետքը՝ զաւալլըն մեռաւ. Ա՛խ, չեմ կրնար լալո բռնել երբ միտքս կուգայ ան տղան: Ճիշէր քաւիւ-նիէն չե՞ս առներ քիչ մը:

—Կառնեմ: Կաղաչեմ անոր խօսքը գոցէ, սիրտս տակն ու վրայ կըլլայ:

—Ճիշէ՞ր թափասին:

—Չէ, խաչիկին, անկէց ալ հազ չեմ ըներ ես՝

—Խաչիկէ՞ն.

—Ճիշէր թափասին. ատեն մը կը խենդենայի անոր համար:

—Ճիշէ՞ր թափասը յին համար.

—Խաչիկին համար. շատ կը սիրէի:

—Խաչի՞կը.

—Ճիշէր թափասին: Քանի վրան կը նայէի, սիրտս գէշ կըլլար:

—Ճիշէ՞ր թափասը յին.

—Խաչիկին. գէշութիւն պատճառեց ինծի, ու հիմա խօսքը ըլլայ նէ գէշութիւն կ'զգամ:

—Խաչիկի՞ն խօսքը.

—Ճիշէր թափասը յին խօսքը. . . Ճիշէրս:

—Հրամմեցէք.

—Խաչիկը ըսել կուզեմ կոր: Գէշութիւն կուտայ չը-սի՞ մի ես՝

—Խաչի՞կը.

—Ճիշէրը, Ճիշէրը:

—Աղբար, խաչիկը Ճիշէրին հետ կը խառնենք կոր: Խաչիկին խօսքը ընենք. խեղճ խաչիկ, մեռնելո՞ւ տղայ էր. ես ինձմէ շիւպհէ կընէի անկէ չէի ըներ: Կենացդ:

—Անուշ ըլլայ: Աստուած լուսաւորէ հոգուն: Կեն-դանութիւն.

—Անուշ անմահութիւն: Մեռնելո՞ւ տղայ էր: Կենացդ:

—Անուշ շէքէր ըլլայ, Աստուած լուսաւորէ հոգուն: Ի՞նչ կ'ուզեն ըսեն, տաճա մեռնելու չէր: Կենացդ.

—Անուշ: Քեզի բան մը ըսե՛մ, մենք կապրինք կոր տէ ի՞նչ կընենք կոր:

—Շիտակ է: Կենացդ:

—Անուշ: Աս ալ քու կենացդ:

—Շէքէր ըլլայ: Մէյմէկ հատ ալ էօղէնկիլիք ընենք տէ երթանք:

—Ելիր նայինք.

—Կենդանութիւն:

—Անուշ ըլլայ:

—Չօճուխներուն բարիւ.

—Խօսք չուզեր, աս իրիկուն աղէկ ատեն անցու-ցինք:

—Գիշեր բարի:

—Վաղը իրիկուն նորէն տեսնուինք.

Երկու բարեկամները գլտորելով դուրս ելան գի-նետունէն, փնտռելու համար իրենց... հաւասարակշռու-թիւնը. Մօտեցայ իրենց, ուղեցի քիչ մը խրատ տալ, բայց տեսնելով որ խրատ ընդունելու համար անօթ չու-նէին, որոշեցի «Հայելի»ի միջոցաւ երկու խօսք ընել իրենց.

Ո՛ր երկու բարեկամներ, աշխարհի վիշտերն ու ցա-ւերը մոռնալու համար գլտորելու գիմելը տխուր որո-շում մըն է, որովհետեւ գլտորումը արդէն վիշտ մըն է ինքնին: Աբրահամ չգլտորեցաւ երբ Խաչիկը զօհել առաջարկուեցաւ իրեն: Յօր երանելին Ճիշէր քաւիւ-նիով օղի չիմեց իր ցաւերը մոռնալու համար: Մի՛ կոր-ծանէք ինքզինքնիդ, խնայեցէք ձեր կուրծքին ու ձեր բսակին:

ՍՐԻՆԳ

ՃԵՄԵԳԻՐ

(Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.)

(Այս առաւօտ ստացանք)

Մարիճա գետ, Ռիւ Արմէնո

Հոս Վարդապետի նախատօնակը շաբաթ մը առաջ կատարուեցաւ: Կազմի ՏՐ Սարսընքիւն քուէսընտանսը զօղու տեսակէն թրջեցին:

«Հայելի»ի Պատասխանները

Տիպար (տարեկան—հանէնտէ) մանկապարտիզ-պանուհիին. —Ստացանք ձեր բաց նամակը, որուն մէջ ձեզի յատուկ պատկերջ ոճով անգամ մ'ալ կը հաստա-տէք թէ որչափ հեռու է արեւելքը արեւմուտքէն, այն-չափ հեռու է ձեզմէ կրթութիւնը: Սխալ գոյգարկած էք: Այդ տեսակ բարձ մը կրնայիք զրկել այն քարեկան-ներէ մէկուն, որոնց ընկերութիւնը անշուշտ երկար ա-տեն վայելած էք: Հազար ափսոս, որ անմեղ մանկտին երբեմն ձեզիպէսներուն ձեռքը կը յանձնուի առ ի դաս-տիարակութիւն. . . . միմիայն առանձնութեանը համար:

Отговорникъ Ж. ИВ. ЖЕКОВЪ
Печатница „Взаимность“ — Варна.